ԱԳՈՐԱ Լոռաստան

ՄԱՅԻՍ 5 - 16 2016 Թ. ԹԻՎ 11 (2099)

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՄ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

Նոր տեխնիկան՝ բարձրորակ աշխատանքի երաշխիք

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն այցելել է Արարատի մարզի Դարակերտ համայնքում գործող ՀՀ ԳՆ «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՊՈԱԿ՝ կենտրոնի ընթացիկ աշխատանքներին ծանոթանալու նպատակով:

«Բանջարաբոստանային մշակաբույսերի տեղական սորտերի մշակության ուղղությամբ տարվող աշխատանքները տարեցտարի ավելի արդյունավետ են ընթանում, ինչի շնորհիվ սերմնաբուծության ոլորտում տարեկան հաջողվում է ապահովել 20-30 տոկոս աճ, ընդ որում, այստեղ մշակվում են բանջարաբոստանային մշակաբույսերի ոչ միայն ավանդական, այլև՝ նոր սորտեր: Ներկայումս կենտրոնը վերակառուցման փուլում է. այժմ կառուցվում է ժամանակակից ջերմոցային տնտեսություն, որտեղ ոռոգումն իրականացվելու է կաթիլային համակարգի միջոցով, իսկ սերմարտադրության ողջ գործընթացը մեքենայացվում է: Կենտրոնը հագեցած է ժամանակակից սարքավորումներով, ինչը թույլ է տալիս բարձրացնել ոչ միայն արտադրողականությունը, այլև ապահովել սերմերի և մշակաբույսերի բարձր որակը», - նշել է Սերգո Կարապետյանը:

Նախարարը նաև հավելել է, որ ջերմոցների կառուցումից հետո, ներդրված նորագույն տեխնոլոգիաների շնորհիվ, հնարավոր կդառնա բավարարել գյուղացիական տնտեսությունների տեղական սորտերի պահանջարկի մոտ 60 տոկոսը: «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ տնօրեն Գագիկ Խաչատրյանն իր հերթին նշել է, որ մինչ այժմ կենտրոնը հնարավորություն ուներ ապահովել տեղական սերմերի և սածիլների պահանջարկի ընդամենը 15 տոկոսը, և կենտրոնի վերագինումը խիստ արդիական է:

Կենտրոնի տնօրեն Գայանե Սարգսյանի խոսքով՝ տեխնիկական հզորացումը թույլ կտա ոչ միայն ավելացնել սերմարտադրության և սածիլի արտադրության ծավալները, այլև կստեղծվեն բարենպաստ պայմաններ՝ մշակաբույսերի նոր, ինտենսիվ սորտերի ստեղծման համար: Նա նաև հավելել է, որ Կենտրոնում աշխատում է 33 գիտնական, որոնց աշխատանքի շնորհիվ վերջին տարիներին շրջանացվել են 18 մշակաբույսերի՝ 35 նոր սորտեր:

Կենտրոնը, համայնքների զարգացման ծրագրերի շրջանակներում, համագործակցում է «Հայաստան» համահայկական հիմնադրամի, ՄԱԶԾ-ի Հայաստանյան գրասենյակի, «Օքսֆամ» հայաստանյան մասնաճյուղի և «Հյուման դիգնիթի ընդ փիս» կազմակերպության հետ՝ տրամադրելով բանջարաբոստանային մշակաբույսերի սածիլներ, ապահովելով դրանց փոխադրումը նաև մատուցելով խորհրդատվական ծառայություններ:

ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության «Աջակցություն Հայաստանում՝

2

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՀՀ օրենքի նախագծի քննարկում

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը հրավիրել էր հանդիպում՝ ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի կողմից ներկայացված «ՀՀ անտառային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկման նպատակով:

Քննարկմանը ներկա էին Կենտրոնի տնօրեն Արմեն Եղիազարյանը, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրեն Մարտուն Մաթևոսյանը, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ոլորտի այլ պատասխանատուներ: Մինչ այս հանդիպումը, օրենքի նախագիծը քննարկվել էր Դիլիջանում անցկացված աշխատանքային քննարկման ժամանակ:

Հանդիպման ընթացքում մասնակիցներն արտահայտեցին իրենց կարծիքներն ու տեսակետները օրենքի նախագծի վերաբերյալ: Նախարար Սերգո Կարապետյանը ծանոթացավ ներկայացրած առաջարկություններին և բարձրացված հարցերին: Որոշվեց շարունակել քննարկումները մասնագետների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ և արդյունքները ներկայացնել ՀՀ վարչապետին՝ խնդրին իրավական ճիշտ լուծում տալու նպատակով:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Վարչապետ Հովիկ Աբրահամյանը վերջերս աշխատանքային այց է կատարել Լոռու և Տավուշի մարզեր:

Կառավարության ղեկավարի առաջին կանգառը եղել է Դեբեդ համայնքում, որտեղ Հովիկ Աբրահամյանը ծանոթացել է SMART կենտրոնի կառուցման շինաշխատանքների ընթացքին: Տեղեկացվել է, որ «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի ֆինանսավորմամբ, SS կենտրոնի կառուցման նպատակով, ներդրվելու է ավելի քան 3 մլն դոլար: Կենտրոնն ուղղված է լինելու մարզում ինովացիոն ենթակառուցվածքների զարգացմանը, նորագույն տեխնոլոգիաների մշակմանը, որոնք կներդրվեն արդյունաբերության տարբեր ճյուղերում:

Կառավարության ղեկավարն այնուհետև ուղևորվել է Թումանյան համայնք: Տեղի ունեցած խորհրդակցության ընթացքում, կառավարության ղեկավարը ծանոթացել է համայնքների խոշորացման ծրագրի արդյունքներին: Մասնավորապես՝ զեկուցվել է, որ Թումանյանի քաղաքապետարանում արդեն իսկ իրականացվել են անհրաժեշտ տեխնիկական աշխատանքներ՝ համայնքին միացած մյուս համայնքների բնակչությանը լավագույնս սպասարկելու նպատակով: Թումանյանի ավագանիում ընդգրկված են քաղաքի բոլոր շրջանները ներկայացնող անդամներ. համատեղ ուժերով աշխատանքներ են տարվում համայնքում առկա խնդիրներին լուծումներ գտնելու համար:

Այնուհետև վարչապետն այցելել է Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայր՝ եղել արտադրամասերում, ծանոթացել այն շահագործող «Վալլեքս» խմբի կողմից իրականացված ներդրումային ծրագրերի արդյունքներին: Կառավարության ղեկավարին տեղեկացվել է, որ հանքավայրի շահագործման առաջին փուլի մեկնարկն ապահովելու համար իրականացվել է ավելի քան 350 մլն դոլարի ներդրում: 2014 թ. դեկտեմբերից 2016-ի ապրիլն ընկած ժամանակահատվածում ընկերությունն արդյունահանել և վերամշակել է շուրջ 8,8 մլն տոննա հանքաքար, արտադրել է 141 հազար տոննա պղնձի խտանյութ՝ պղնձի 27,89 տոկոս պարունակությամբ: Ներկայում ընկերությունն ունի շուրջ 1200 աշխատող՝ հիմնականում հարակից Թեղուտ, Շնող և Լոռու մարզի այլ համայնքներից: Վարչապետը նշել է, որ այս տարվա առաջին եռամսյակում ընկերությունն արձանագրել է արտադրության 57 տոկոսի աճ: Հովիկ Աբրահամյանը հույս է հայտնել, որ աճը կարտացոլվի ողջ տարվա ընթացքում: Այս տարի արդեն իսկ ընկերությունը տվել է 16 մլրդ դրամի արտադրություն: Խոսելով խոշորացված Թումանյան համայնքի մասին՝ վարչապետն ընդգծել է, որ կառավարությունը մոտ 300 մլն դրամի աջակցություն է նախատեսել՝ համայնքում առկա խնդիրները լուծելու նպատակով: «Խորհրդակցության ընթացքում բարձրացվեց համայնքի դպրոցի վերանորոգման խնդիրը և մենք այն կներառենք 2017 թվականի պետական բյուջեի ծրագրերի թվում: Կվերացվեն նաև Թումանյանի մանկապարտեզում հրդեհի պատճառով առաջացած խնդիրները, ըստ անհրաժեշտության մանկապարտեզում կիրականացվեն շինարարական այլ աշխատանքներ: Այս համայնքում պատրաստվում ենք կյանքի կոչել լուրջ ծրագրեր, քանի որ այն զբոսաշրջության առումով, գայթակղիչ տարածք է: Մասնավորապես, հանձնարարվել է մարզպետին՝ մշակել զբոսաշրջության զարգացման ծրագրեր և ներկայացնել կառավարություն: Մենք նաև տարածքային համաչափ զարգացման նպատակով, իրականացնելու ենք ենթակառուցվածքների զարգացման ծրագրեր»,- նշել է Հովիկ Աբրահամյանը:

Թեղուտից վարչապետ Աբրահամյանն ուղևորվել է «Բագրատաշեն» սահմանային անցակետ: Կառավարության ղեկավարը շրջայց է կատարել սահմանային անցման կետում՝ ծանոթացել կատարվող շինաշխատանքների ընթացքին: Նոր անցակետում տեղադրված կլինեն ժամանակակից զննող-հսկող սարքավորումներ: Հովիկ Աբրահամյանը կարևորել է քաղաքացիների, այդ թվում տնտեսվարող սուբյեկտների համար սահմանի հատման արդի պայմանների ստեղծումը, կուտակումների վերացումն ու բարձրորակ ծառայությունների մատուցումը:

2

Կոոպերացիա Էջ 5

Համայնքային Էջ 6

Մասնագետի խորհուրդը Էջ 7

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

1

Վարչապետի հաջորդ կանգառը եղել է Նոյեմբերյանում, որտեղ նա հանդիպել է համայնքի բնակիչներին, պատասխանել նրանց հուզող հարցերին, ծանոթացել առկա խնդիրներին: Գործադիրի ղեկավարն ընդգծել է, որ սահմանամերձ համայնքները եղել և շարունակելու են մնալ կառավարության ուշադրության կենտրոնում: Վարչապետի խոսքով՝ պետությունն իրականացնելու է ինչպես սոցիալական խնդիրների լուծմանը, այնպես էլ՝ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրեր: Նոյեմբերյանցիները բարձրացրել են Նոյեմբերյանը սահմանամերձ համայնքների ցանկում ընդգրկելու հարցը, ինչը նրանց հնարավորություն կտա օգտվել կառավարության սահմանած մի շարք արտոնություններից: Հովիկ Աբրահամյանը խոստացել է սեղմ ժամկետում հարցը քննարկել կառավարությունում: Վարչապետն այցելել է նաև Ոսկևան, Զորական և Կոթի համայնքներ, հանդիպել տեղի բնակիչներին, լսել նրանց խնդիրները, որոնք վերաբերել են ճանապարհների, ուսումնական հաստատությունների վերանորոգմանը, գազատարի ներքին ցանցի կառուցմանը և այլն: Վարչապետը հանձնարարել է համապատասխան գերատեսչությունների ղեկավարներին՝ քննարկել բարձրացված հարցերը և կառավարություն ներկայացնել դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

Նոր տեխնիկան՝ բարձրորակ աշխատանքի երաշխիք

1

բանջարային մշակաբույսերի սերմնաբուծության և սերմարտադրության համակարգի զարգացման» ծրագրի շրջանակներում, Կենտրոնին 2015 թ.-ին տրամադրվել են սերմարտադրության հոսքային գծեր (սերմհանող, սերմաքրող, սերմչորացնող, սերմտեսակավորող, սերմախտահանող, սերմփայլեցնող, և սերմփաթեթավորող), որոնց մի մասը ժամանակավոր տեղադրված են և շահագործվում են, մյուսները կտեղադրվեն շինարարական աշխատանքների ավարտից հետո:

Գիտական կենտրոնում CARMAC-2 ծրագրի՝ «Գյուղատնտեսական կառուցվածքների հզորացում» բաղադրիչի շրջանակներում, 2015թ. նոյեմբերից սածիլների արտադրության հնարավորությունների հզորացման նպատակով, կատարվում են 0,6 հա ջերմատան և կից շինության վերանորոգման աշխատանքներ: Ներկայումս մասնակի վերանորոգվել են 0,3 հա ջերմատունը, կից շինությունը, կաթսայատունը և ջեռուցման համակարգը: Աշխատանքները շարունակվում են և կավարտվեն 2016թ. վերջին: Վերը նշված ծրագրի շրջանակներում, սածիլների աճեցման համար, Կենտրոնին տրամադրվել է նաև սերմնացան հոսքային գիծ, որը կտեղադրվի և կշահագործվի ջերնատան վերանորոգումից հետո:

Համակողմանի աջակցություն

ՀՀ կառավարության պատվիրակության կազմում աշխատանքային այցով Արցախում գտնվող ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, մայիսի 8-ին առաջնագիծ այցից հետո, հանդիպում է ունեցել ԼՂՀ ԳՆ ղեկավարության հետ: Տեղի ունեցած քննարկումների ընթացքում շոշափվել են համագործակցության և երկկողմ կապերի սերտացմանն ուղղված հարցեր:

Հանդիպման ընթացքում ԼՂՀ գործընկերները կարևորել են այն հանգամանքը, որ ապրիլյան քառօրյա պատերազմի ընթացքում, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը մշտական կապի մեջ է եղել Արցախի իր գործընկերների հետ՝ ձգտելով գտնել առաջացած խնդիրների արդյունավետ լուծումները: «Մենք ձեր կողքին ենք լինելու միշտ և շարունակելու ենք հա-

մակողմանի աջակցություն ցուցաբերել»,- նշել է Սերգո Կարապետյանը՝ հավելելով, որ Արցախի իրենց գործընկերներին ՀՀ գյուղատնտեսության նախարարության մասնագետները կաջակցեն նաև գյուղոլորտի մասնագետների վերապատրաստման ուղղությամբ: ԼՂՀ գյուղատնտեսության նախարար Արամ Մխոյանը շնորհակալություն է հայտնել ապրիլյան ռազմական գործողությունների ընթացքում ՀՀ գյուղատնտեսության նախարարության և անձամբ Սերգո Կարապետյանի կողմից ցուցաբերված նյութական օժանդակության համար, որը կուղղվի պատերազմի հարուցած դժվարությունների հաղթահարմանը: Երկու նախարարները գոհունակություն են հայտնել համագործակցության առկա մակարդակից՝ հույս հայտնելով, որ այն հետագայում ավելի կխորանա:

Կառավարության նիստում հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետությունում ջրամատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայություններ մատուցող ընկերությանը բնապահպանական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Ըստ հիմնավորման՝ ներկայում բնապահպանական վճարների գծով արտոնություններ է սահմանված Երևան քաղաքի և հարակից 30 բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վարձակալ՝ «Երևան Ջուր» ՓԲԸ-ի համար: Միաժամանակ, ՀՀ կառավարության համապատասխան որոշումների համաձայն՝ իրականացվում է հանրապետության 5 ջրամատակարար ընկերությունների սպասարկվող տարածքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի միասնական վարձակալի ընտրության գործընթացը, որի գործունեության մեկնարկը սահմանվել է 2017 թ. հունվարի 1-ը:

Օրինագծով նախատեսվում է բնապահպանական վճարների գծով արտոնություններ սահմանել նաև ապագա միասնական վարձակալ ընկերության համար: Արդյունքում՝ ակնկալվում է ջրային տնտեսության ոլորտի հետագա զարգացում, սպառողներին մատուցվող ջրամատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների բարելավում: Օրինագծի ընդունումը թույլ կտա նաև բնապահպանական վճարների մասով չբարձրացնել ծառայությունների սակագները:

www.gov.am

ՔԵՆԱՐԿՈՒՄ

Գարնան գյուղատնտեսական աշխատանքներն ընթացքի մեջ են

Հերթական աշխատանքային այցով վերջերս Տավուշի մարզում էր ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար Սամվել Գալստյանը: Տավուշի մարզպետարանում փոխնախարարին ընդունել է մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը: Հանդիպմանը ներկա է եղել նաև

մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Վաղարշակ Սուքոյանը: Քննարկվել է 2016 թվականի գարնան գյուղատնտեսական աշխատանքների ընթացքը, ներկայացվել է առաջիկա անելիքները: Գյուղատնտեսության վարչության պետը, ըստ մշակաբույսերի, ներկայացրել է 2016 թվականի ցանքերի ընթացքը մարզում, ինչպես նաև տեղեկատվություն՝ ՀՀ կառավարության որոշմամբ, գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող պետական աջակցության ծրագրերի շրջանակներում, Տավուշի մարզպետարանի կողմից ներկայացված հայտերի հիման վրա, մարզին հատկացված դիզվառելիքի, ազոտական, ֆոսֆորական, կալիումական պարարտանյութերի, գարնանացան գարու և առվույտի սերմացուի ներկրման ու բաշխման գործընթացի վերաբերյալ: Անդրադարձ է կատարվել նաև գյուղտեխնիկայի նորացման, կոոպերացիայի զարգացման, արտահանման ծավալների ավելացման հարցերին:

www.tavush.mtaes.am

Դեռևս վաղ գարնանը մեկնարկած գյուղատնտեսական աշխատանքները նոր թափ են ստացել ապրիլ ամսին:

Գարնան գյուղատնտեսական աշխատանքներին, մասնավորապես՝ ոռոգման համակարգերի կենսագործման ընթացքին անձամբ հետևելու և առկա խնդիրները տեղում ուսումնասիրելու համար, Արարատի մարզպետ Ռուբիկ Աբրահամյանը վերջերս այցելել է մի շարք համայնքներ:

Էլեկտրաէներգիայի անկանոն մատակարարման հետևանքով, մի քանի պոմպակայաններում առաջացած աշխատանքների խափանումը վերացնելու հարցը բարձրացրած հողօգտագործողների ու համայնքների ղեկավարների հետ հանդիպման ժամանակ, Ռուբիկ Աբրահամյանը շեշտել է, որ հարկ եղած դեպքում ջրամատակարարները պետք է աշխատեն շուրջօրյա աշխատանքային գրաֆիկով, որպեսզի հողօգտագործողը չկանգնի ոռոգման խնդրի առջև:

Հարցին տեղում լուծում տալուց հետո, մարզպետ Աբրահամյանն այցի շրջանակներում եղել է Քաղցրաշեն 1 և Քաղցրաշեն 2 պոմպակայաններում, ինչպես նաև Ոստան, Ջրաշեն, Հնաբերդ, Նարեկ Աբովյան համայնքներում, անձամբ հետևել ոռոգման ջրի բաշխման աշխատանքներին՝ հանձնարարելով սեղմ ժամկետում իրականացնել ոռոգման ջրի համակարգերի որակյալ վերանորոգում, նաև գյուղացուն ապահովել կանոնավոր ջրամատակարարմամբ:

Նարեկ համայնքում Ռուբիկ Աբրահամյանը հետևել է հեղեղատարի վերանորոգման աշխատանքներին: Մարզպետի առաջարկությամբ և ՀՀ կառավարության կողմից հատկացրած գումարի տրամադրմամբ՝ կատարվում են Նարեկի ու շրջակա համայնքների համար լուրջ վտանգ ներկայացնող հեղեղատարի շինարարական-վերականգնողական աշխատանքներ:

Մարզպետը նարեկցիների հետ զրուցելիս ասել է, որ հետևողական է լինելու նրանց կողմից բարձրացված հարցերին և հավաստիացրել, որ Արարատի մարզպետարանն անում է ամեն ինչ, որպեսզի բուռն աշխատանքներով սկսված գյուղատնտեսական տարին շարունակվի նույն տեմպով: Ռուբիկ Աբրահամյանի հանձնարարությամբ, այս շաբաթվա վերջում, մարզպետարանում կկայանա խորհրդակցություն՝ ոռոգման խնդիրների հետ կապված:

www.ararat.mtaes.am

ԱԳՐՈ Լրատու
Մայիս 5 - 16, 2016 թ.
թիվ 11 (2099)

ԲԵՐՔԱՇԱՎԱՔԻՆ ԸՆԴԱՌԱՋ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԴՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՀԱՄԱՐ

«Ապրիլյան դեպքերով պայմանավորված բացթողումները հնարավորինս չափ լրացնելու նպատակով, անհրաժեշտ է առաջիկայում օպերատիվ համալիր աշխատանք իրականացնել՝ գարնանացանի և բանջարաբոստանային մշակաբույսերի մշակությունն ավարտին հասցնելու, հունիսին մեկնարկելիք հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքը հնարավորինս անկորուստ իրականացնելու, ինչպես նաև բերքը պատշաճ ձևով մթերելու ուղղություններով»: Այս մասին նշել է Արցախի Հանրապետության վարչապետ Արայիկ Հարությունյանը՝ օրերս գյուղատնտեսության ոլորտի պատասխանատուների մասնակցությամբ հրավիրած խորհրդակցության ժամանակ:

«Այս տարի նախատեսում ենք իրականացնել տարբեր տեսակի գյուղատնտեսական ապրանքների անսահմանափակ քանակի մթերում՝ վերամշակման նպատակով: Արդյունքում կաջակցենք մեր բնակիչներին՝ իրենց վիճակը փոքր-ինչ բարելավելու գործում, ինչպես նաև կլուծենք պարենային անվտանգության հետ կապված որոշ հարցեր»:

ԱՀ գյուղատնտեսության նախարար Արամ Մխոյանը, հակիրճ տեղեկատվություն ներկայացնելով կատարված աշխատանքների վերաբերյալ, նշել է, որ նախատեսված գարնանային ցանքսը, հայտնի պատճառներով, ավարտին չի հասցվել, սակայն աշխատանքները դեռևս ընթացքում են: Նրա խոսքով՝ շարունակվում է նաև սերմերի և թունաքիմիկատների տրամադրման գործընթացը: Գյուղնախարարի տեղեկացմամբ, առաջիկայում կոմբայնների շարքը համալրվելու է ևս 6-ով:

Խորհրդակցության ավարտին կառավարության ղեկավարը գյուղոլորտի բոլոր պատասխանատուներին հորդորել է բերքահավաքի աշխատանքներն իրականացնելիս՝ համագործակցել միմյանց հետ՝ հնարավորինս անկորուստ արդյունքներ գրանցելու համար:

www.panorama.am

ԾՐԱԳԻՐ

Բույսերի գենետիկական ռեսուրսների (ՊԳԲԳՌ) պահպանության, կայուն օգտագործման և բույսերի պաշտպանության ազգային ծրագրերի մշակման անհրաժեշտությունը

Վերջերս Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Եվրոպական հարևանության գյուղատնտեսության և գյուղի զարգացման» ծրագրի շրջանակում իրականացվող «Տեխնիկական օժանդակություն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը» ծրագիրն անցկացրեց կլոր սեղան քննարկումներ՝ «Հայաստանում պարենի և գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների (ՊԳԲԳՌ) պահպանության և կայուն օգտագործման գնահատականը և ազգային ծրագրի մշակման ընթացքը»և «Բույսերի պաշտպանության ներկա վիճակը Հայաստանի Հանրապետությունում, առկա հիմնախնդիրները և վնասատուների դեմ համակցված պայքարի ազգային ծրագրի մշակման անհրաժեշտությունը» թեմաներով:

Միջոցառումներին մասնակցել են ՀՀ գյուղատնտեսության նախարարության, Գյուղատնտեսության աջակցության մարզային և հանրապետական կենտրոնների, համալսարանների, գիտականկենտրոնների, միջազգային և տեղական կազմակերպությունների, այլ շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներ:

Երկօրյա քննարկումների ժամանակ ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար Գառնիկ Պետրոսյանը ներկայացրեց պարենի և գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների (ՊԳԲԳՌ) պահպանության և կայուն օգտագործման, ինչպես նաև բույսերի պաշտպանության ոլորտներում առկա խնդիրները, այդ ոլորտները կարգավորող ազգային ծրագրերի մշակման անհրաժեշտությունը:

Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության Տարածաշրջանային գրասենյակի բուսաբուծության և բույսերի պաշտպանության հարցերով պատասխանատու Ավետիք Ներսիսյանը ներկայացրեց նշված ուղություններով կազմակերպության կողմից իրականացվող աշխատանքները, ինչպես նաև՝ միջազգային փորձը:

Քննարկումների առաջին օրը ծրագրի փորձագետ Ալվինա Ավագյանը ներկայացրեց ԵՀԳԳԶԾ ծրագրի շրջանակում իրականացված «Հայաստանում պարենի և գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանության և կայուն օգտագործման ներկա վիճակի վերլուծության» արդյունքները և բացահայտված կարիքները, որին հետևեց քննարկում՝ ազգային ծրագրի նախնական կառուցվածքի և աշխատանքների իրականացման ժամանակացույցի վերաբերյալ, իսկ հաջորդ օրը Հայաստանի ազգային ագրարային համալսարանի այգեպտղաբուծության և բույսերի պաշտպանության ամբիոնի վարիչ Արմենակ Տեր-Գրիգորյանը ներկայացրեց երկրում բույսերի պաշտպանության բնագավառի իրավիճակի վերլուծությունը և ազգային ծրագրի մշակման անհրաժեշտության մասին զեկույցը:

Քննարկումների արդյունքում մասնակիցները հաստատեցին այս ոլորտները կարգավորող ազգային ծրագրերի մշակման անհրաժեշտությունը և իրենց պատրաստակամությունը հայտնեցին աջակցել ազգային ծրագրերի մշակմանը՝ մասնակցելով համապատասխան աշխատանքային խմբերի աշխատանքներին:

«Եվրոպական հարևանության գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացում» (ԵՀԳԳԶԾ/ENPARD) ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և նպատակ ունի Հայաստանում աջակցել գյուղատնտեսության կայուն զարգացմանը: ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից իրականացվող «Տեխնիկական օժանդակություն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը» բաղադրիչի նպատակն է՝ «Գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության» մշակման գործընթացին աջակցելու միջոցով խթանել պարենային արտադրության կայուն աճը, գյուղատնտեսության, ինչպես նաև գյուղական բնակավայրերի զարգացումը:

Եղանակի կանխատեսում՝ մայիս ամսվա համար

Մայիսին բնորոշ է մթնոլորտային գործընթացների զգալի ակտիվացումը և օդային զանգվածների հաճախակի փոխատեղումը: Տաք և ցուրտ օդային զանգվածների հերթափոխը, ինչպես նաև երկրի մակերևույթի անհավասարաչափ տաքացումը, բարձր լեռնային շրջաններում ձյան հալոցքը բերում է հզոր կոնվեկտիվ հոսանքների առաջացման՝ հաճախ են դիտվում հորդառատ բնույթի տեղումներ, որոնք ուղեկցվում են ամպրոպներով. Այս մասին տեղեկացնում է ՀՀ ԱԻ նախարարության մամուլի ծառայությունը:

Միջին օրական ջերմաստիճանը համեմատաբար ցածր է, առաջին տասնօրյակում՝ 8.2 ^{0}C, այնուհետև աստիճանաբար բարձրանում է երրորդ տասնօրյակում՝ հասնելով 10.9 ^{0}C: Միջին ամսական ջերմաստիճանը առավել բարձր է Արարատի և Արմավիրի մարզերում, Վայոց ձորի և Սյունիքի հովիտներում, Արագածոտնի նախալեռներում՝ +17...+18 ^{0}C: Գեղարքունիքում, Արագածոտնի լեռնային շրջաններում և Շիրակում՝ +8...+10 ^{0}C, բարձր լեռնային շրջաններում (3000 մետրից բարձր) այն դեռևս բացասական է՝ -0.5 ^{0}C, այստեղ դեռ ձյան տեսքով տեղումների հավանականությունը պահպանվում է:

Արարատյան դաշտում և Սյունիքի հովիտներում միջին ջերմաստիճանի կայուն անցումը 15 ^{0}C բարձր է, որը համարվում է ամռան սկիզբ: Չնայած բարձր ջերմաստիճանային ֆոնին՝ լեռնային շրջաններում ողջ ամսվա ընթացքում պահպանվում է ցրտահարության վտանգը, ընտ որում երբեմն զգալի ինտենսիվությամբ, որը կարող է բացասական ազդեցություն ունենալ գյուղատնտեսական կուլտուրաների վրա: Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը լեռնային շրջաններում կարող է նվազել մինչև -8...-10 ^{0}C: Արարատյան դաշտում, Տավուշի մարզում, Սյունիքի հովիտներում ամսվա առաջին տասնօրյակում մինչև -10 ^{0}C, իսկ առավելագույն ջերմաստիճանը կարող է հասնել +35...+38 ^{0}C (Արմավիր, Մեղրի): Ամպամած օրերի թիվը գերակշռում է: Տեղումների առավելագույն քանակը դիտվում է մայիսին և միջինը կազմում է 92 մմ, տեղումներով օրերի թիվը՝ միջինը 17-20 օր: Ամենից շատ տեղումներ դիտվում են Լոռիում 120-130 մմ, ամենաքիչը՝ Արարատի, Արմավիրի մարզերում՝ 40-50 մմ: Հարաբերական խոնավությունը հանրապետությունում միջինը կազմում է 68 %: Մեծանում է կարկուտի հավանականությունը՝ միջինը ամիսը 1-3 օր, Տաշիրում՝ 8 օր: Հանրապետությունում քամու արագությունը որոշակիորեն մեծանում է: Ամսական տեղումների քանակը ենթադրվում է բազմամյա միջին քանակին մոտ (նորման 35-50 մմ):

Շիրակի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզեր, Արագածոտնի մարզի լեռնային շրջաններում օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է 9..12 ^{0}C, որը որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Լոռու մարզում օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է 12...12 ^{0}C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Ամսական տեղումների քանակը ենթադրվում է բազմամյա միջին քանակին մոտ (նորման՝ 95-130 մմ): Տավուշում օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է 13..16 ^{0}C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Վայոց ձորի մարզում օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է հովտային շրջաններում 18...19 ^{0}C, լեռնային շրջաններում՝ 10...12 ^{0}C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Սյունիքի մարզում օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է հովտային շրջաններում՝ 17...20 ^{0}C, լեռնային շրջաններում՝ 11...12 ^{0}C: Ամսական տեղումների քանակը ենթադրվում է բազմամյա միջին քանակին մոտ:

Երևան քաղաքում օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է 18..19 ^{0}C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Ամսական տեղումների քանակը ենթադրվում է բազմամյա միջին քանակին մոտ (նորման 45-60 մմ):

www.barometer.am

ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Այս տարվա ապրիլ ամսից Շիրակի մարզում մեկնարկել են սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման պետական ծրագրի աշխատանքները:

Ծրագիրն իրականացվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության պետական գործակալության Շիրակի մարզի տարածքային կենտրոնների կողմից, որում որպես գյուղատնտեսական աշխատանքների խորհրդատուներ՝ ներգրավված են Շիրակի ԳԱՄԿ-ի մասնագետներն ու խորհրդատուները, ովքեր մասնակցում են հողօգտագործողի գործարար ծրագրի, գյուղատնտեսական աշխատանքների պլան-ժամանակացույցների կազմման, փաստացի վճարման հիմք հանդիսացող պլան-ժամանակցույցով նախատեսված աշխատանքների կատարողականների եզրակացության տրամադրման աշխատանքներին:

Ծրագրի նպատակն է՝ սեզոնային զբաղվածության ապահովման միջոցով առավել խոցելի և աղքատ գյուղական բնակավայրերի բնակչության սոցիալական լարվածության մեղմումը, գյուղացիական տնտեսությունների աշխատանքի արտադրողականության բարձրացումը, կայուն զբաղվածության համար պայմանների ստեղծումը, ինչպես նաև իրավիճակից բխող մարտահրավերներին արագ արձագանքող միջոցներով, գյուղացիական տնտեսություններին աջակցելը:

Ծրագրի շահառուներն են՝ զբաղվածության տարածքային կենտրոններում հաշվառված գյուղատնտեսական հողի սեփականատեր կամ վարձակալ հանդիսացող աշխատաշուկայում անմրցունակ ճանաչված ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ընդգրկված հողօգտագործողները, ինչպես նաև ընտանիքում երկու և ավելի անչափահաս երեխա, հաշմանդամ ունեցող ընտանիքները:

Ծրագրում ընդգրկված հողօգտագործողին մեկ աշխատանքային օրվա համար վճարվում է 4000 դրամ՝ ներառյալ եկամտային հարկը, գործատուի մոտ աշխատանքի ընդգրկվող ընտանիքի անդամի համար 4000 դրամ՝ ներառյալ եկամտային հարկը, վարձու աշխատողի համար՝ 3000 դրամ՝ ներառյալ եկամտային հարկը, քաղաքացիա-իրավական պայմանագրով հողօգտագործողին ծառայություն մատուցող անձին՝ կատարված աշխատանքների դիմաց վճարելու համար, մեկ տրակտոր՝ 1 ժամի դիմաց 5000 դրամ: Մեկ ծրագրի արժեքը չի կարող գերազանցել 350000 դրամը, իսկ առավելագույն տևողությունը 180 օր է:

Աշխատանքները մեկնարկել են մարզի բոլոր հինգ տարածաշրջաններում: Մասնավորապես՝ Արթիկի տարածաշրջանի Մեծ Մանթաշ համայնքում արդեն իրականացվել են շահառուներ՝ Հակոբ Հաջիբաբյանի, Գառնիկ Չախոյանի, Վարդուհի Թիկնիզյանի, Մամիկոն Եղոյանի գազարի ցանքատարածությունների քարհավաքի, ցանքի աշխատանքների գնահատման մոնիթորինգները: Վերջիններիս հիման վրա Արթիկի ԶՏԿ-ին տրամադրվել են այս տարվա առաջին եզրակացությունները: Մոնիթորինգներ են անցկացվել նաև Լեռնակերտ, Նահապետավան գյուղերում:

Շիրակի ԳԱՄԿ

ԿՐԹԱԿԱՆ

ԿԱՐԵՎՈՐ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը 1999 թվականից Գերմանիայի Դաշնության Վայհենշտեֆան-Թրիսդորֆի կիրառական գիտությունների համալսարանի հետ նախ՝ միջհամալսարանական, այնուհետև միջպետական (2002 թ.) համագործակցության պայմանագրերի շրջանակներում, իրականացնում է համատեղ մագիստրոսական կրթական ծրագիր՝ «Ագրարային մենեջմենթ» («Ագրարային էկոնոմիկա և կառավարում») մասնագիտության գծով:

Ծրագրի շրջանակներում, յուրաքանչյուր տարի, համալսարանի շուրջ 10 մագիստրանտ մեկ կիսամյակ արտադրական փորձաշրջան են անցնում Գերմանիայի Դաշնության Բավարական մարզի ագրոպարենային համակարգի ամենատարբեր ընկերություններում ու ֆերմերային տնտեսություններում: Նրանց գրեթե կեսը, մրցութային կարգով, ընտրվում և ուսումը շարունակում են գործընկեր համալսարանում, մյուսները վերադառնում են Երևան՝ ուսումը շարունակելու տեղում:

Դեռևս 2013 թ. Վայհենշտեֆան-Թրիսդորֆի համալսարանի նշված մագիստրոսական միջազգային ծրագրի լավագույն գործընկեր համալսարաններ են ճանաչվել ՀԱԱՀ և Ուկրաինայի Սումիի համալսարանը: Անցած 17 տարիների ընթացքում համատեղ մագիստրոսական ծրագիրն ավարտել են շուրջ 150 մագիստրոսներ: Առանց բացառության, բոլորն էլ այսօր աշխատում են՝ հիմնականում հանրապետության և արտերկրի ինչպես պետական, այնպես էլ՝ մասնավոր կազմակերպություններում ու ընկերություններում, նաև Վայհենշտեֆան-Թրիսդորֆի և Հայաստանի ազգային ագրարային համալսարաններում: Երկու տարի առաջ սկսվեց Վայհենշտեֆանի կիրառական գիտությունների համալսարանի և համագործակցող համալսարանների՝ այդ թվում նաև Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, միջև մագիստրոսական ծրագրի համատեղ հավատարմագրման գործընթացը, որի նախնական բոլոր փուլերն ավարտվել են հաջողությամբ: Վերջերս Գերմանիայի Դաշնության Վայհենշտեֆանի համալսարանում կրթության որակի վերահսկման և հավատարմագրման ինստիտուտի (ACQUIN) փորձագիտական խումբը, որում ընդգրկված են Եվրոպական 9 առաջատար համալսարանների ներկայացուցիչներ, կազմակերպվել էր հավատարմագրման ավարտական փուլի քննարկում, որին մասնակցում էր նաև ՀԱԱՀ ռեկտոր, գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ անդամ Ա. Թարվերդյանը: Հաձնաժողովի նիստը սկսվեց ՀԱԱՀ «Ագրարային մենեջմենթ» մագիստրոսական ծրագրի հավատարմագրման գործընթացի քննարկմամբ:

Ռեկտոր Ա. Թարվերդյանը համառոտ ներկայացրեց համալսարանը, ապա անդրադարձավ համալսարանում իրականացվող միջազգային ծրագրերին՝ հանգամանորեն ներկայացնելով «Ագրարային մենեջմենթ» ծրագիրը: Հանձնաժողովի անդամների հարցերին տրվեցին հստակ և սպառիչ պատասխաններ: Թե՛ համալսարանի գործունեությունը, և թե՛ «Ագրարային մենեջմենթ» մագիստրոսական կրթական ծրագրի կատարման ընթացքը գնահատվեց բարձր: Հատկանշական է, որ հանձնաժողովի կողմից ամենաբարձր վարկանիշային միավորներ ստացել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանը և Ուկրաինայի Սումիի համալսարանը: Սեմինարին Երևանից առցանց համակարգով մասնակցում էին նաև ՀԱԱՀ «Ագրարային մենեջմենթ» կրթական ծրագրի համակարգողները: «Ագրարային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական ծրագրի այս ընթացիկ կոնֆերանսը միտված է ամփոփելու մինչ օրս այդ ուղղությամբ կատարված աշխատանքները, ինչպես նաև հող նախապատրաստելու հավատարմագրումն ավարտելուց հետո շրջանավարտ-մագիստրոսներին կրկնակի դիպլոմների շնորհման, այսինքն՝ բացի ՀԱԱՀ «Տնտեսագետ-մագիստրոսի» որակավորման դիպլոմից ստանալ նաև Վայհենշտեֆան-Թրիսդորֆի համալսարանի դիպլոմ (այսօր դեռևս ստանում են նշված համալսարանի սերտիֆիկատ): Այս հավատարմագրումը ՀԱԱՀ-ի վերջին տարիների կարևորագույն ձեռքբերումներից է: Այն համալսարանին լայն հնարավորություն է ընձեռում էլ ավելի ընդարձակելու և ամրապնդելու միջազգային համագործակցությունը, ինչպես նաև՝ արմատապես բարելավելու կրթության որակը:

Հավատարմագրման հանձնաժողովի հետ մասնավոր քննակումներ են անցկացվում համալսարանի մի շարք այլ կրթական ծրագրերի փորձաքննության և հավատարմագրման ուղղությամբ:

www.anau.am

ԱԳՐՈ Լրատու
Մայիս 5 - 16, 2016 թ.
թիվ 11 (2099)

ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

ԱԿՈՒՆՔՑԻՆԵՐԸ ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆԸ

Կոտայքի մարզի «Ակունք համայնքի արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվը» ձևավորվել է 2015 թ. հունիսին՝ 90 անդամով, որից 30-ը կանայք են: Զարգացած անասնաբուծություն ունեցող այս գյուղում խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակն արդեն հասնում է 1200-ի, որից 386ը կովեր են: Կոոպերացիան լիարժեք պայմաններ է ստեղծում գյուղում անասնապահությունն ավելի զարգացնելու ուղղությամբ:

Արոտավայրերն Ակունքից գտնվում են 5-20 կմ հեռավորության վրա: Արոտավայրեր տանող ճանապարհները ենթակա են նորոգման: Արոտավայրերի բարելավման ծրագրի շրջանակում նախատեսված է նորոգել ճանապարհի ամենավատթար վիճակում գտնվող 3-4 կմ երկարությամբ հատվածը: Գյուղապետ Հունան Ռուբենյանի տեղեկացմամբ, պետք է կառուցվեն նաև անձրևաջրերի հեռացման ջրատարներ, իսկ կենդանիների համար անհրաժեշտ խմոցների ջրամատակարարման նպատակով կանցկացվի 2,5 կմ երկարությամբ խողովակաշար: Այդպիսով՝ ամբողջությամբ կջրարբիացվեն 1300 հա հարուստ բուսածածկով արոտավայրերը: Թեև Ակունքը հարուստ է աղբյուրներով, այնուամենայնիվ ,ջրի մշտական ապահովման համար արոտավայրերում տեղադրվելու են նաև ջրատարողություններ: Կոոպերատիվին տրամադրվելու է նաև 20 միավոր գյուղատնտեսական տեխնիկա՝ 2 տրակտոր, 2 գութան, հակավորող 2 սարք, շարքացան և այլն: Առկա տեխնիկան հնարավորություն կտա մշակել նաև Հատիս լեռան վրա գտնվող 250 հա վարելահողերը, որոնք վաղուց վերածվել են բնական խոտհարքերի: Ի դեպ, Ակունքում չմշակվող հողատարածքներն աստիճանաբար մտնում են մշակության տակ: Սեփականատիրոջ կողմից հողը չմշակելու դեպքում, գյուղապետարանի թույլտվությամբ, այն մշակվում է մեկ այլ ֆերմերի կողմից: «Կարևորն այն է, որ սակավահող մեր երկրում ոչ մի թիզ հող անմշակ չմնա: Հողերը պետք է օգտագործել արդյունավետորեն; Իսկ նորաստեղծ կոոպերատիվին հատկացվող գյուղտեխնիկայի շնորհիվ, կբարձրանա հողերի մշակության արդյունավետությունը: Բացի այդ, տեխնիկայով կատարվող ծառայությունների մատչելիության շնորհիվ, կբարձրանա ծրագրի տնտեսական արդյունավետությունը»,- նշում է գյուղապետը: Կիսով չափ կրճատվում են վարի աշխատանքների վրա կատարվող ծախսերը 30 հազար դրամից իջնելով 16 հազար դրամի: Նվազում են նաև հակավորման ծախսերը՝ (130 դրամից իջնելով 90 դրամի): Գյուղում առկա են 350 հա հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածքներ, որից 50 հա-ն՝ աշնանացան: Ցանել են նաև 100 հա բանջարեղեն: Նախնական հաշվարկները ցույց են տալիս, որ տեխնիկայի համալրումից հետո հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածքները կավելանան ևս 100 հա-ով: Կոոպերատիվի անդամները նախատեսել են 20 հա հողատարածք դնել կորնգանի ցանքի տակ: Առաջին և երկրորդ կարգի ջրովի հողատարածքները, որոնցում ներդրված է ոռոգման անձրևացման համակարգ, բարձր բերք են ապահովում: Աճեցնում են նաև առվույտ և կերային այլ մշակաբույսեր, որով ամբողջությամբ բավարարվում է կոոպերատիվի անդամների մոտ առկա անասնագլխաքանակի պահանջարկը: Ինչ վերաբերում է կաթի մթերմանը, ապա այն գնվում է վերամշակող, մասնավորապես՝ «Թամարա» և այլն ընկերությունների կողմից՝ 1 լիտրը՝ 130-140 դրամով: «Գյուղում արտադրվում են մեծ քանակությամբ թե՛ կաթ, և թե՛ միս: Բարձրորակ հումքի վերամշակման համար գյուղում արդեն առաջ է եկել փոքր արտադրամասերի ստեղծման անհրաժեշտություն: Կոոպերատիվի ձևավորումից հետո նկատելի է անասնագլխաքանակի ավելացման միտում»,- ասում է կոոպերատիվի նախագահ Աբրահամ Ավետիսյանը:

Կոոպերատիվի անդամներով նախատեսել են բարելավվել անասնագլխաքանակը, այդ նպատակով կազմակերպում են կովերի արհեստական սերմնավորում:

Ի դեպ, գյուղում գործում է արհեստական սերմնավորման կայան: «Կոոպերատիվի գաղափարը հոգեհարազատ էր ակունքցիներին:

6

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԱՏ ԵՆ, ՍԱԿԱՅՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼԻ ԵՆ

Կոտայքի մարզի Արզական գյուղում վաղուց արդեն արտադրական ձեռնարկություններ չկան: Գյուղացու ապրուստի միակ միջոցը գյուղատնտեսությունն է: Բնակիչները հիմնականում զբաղվում են երկրագործությամբ, պտղաբուծությամբ և անասնաբուծությամբ: Սակայն այստեղ ևս կան դժվարություններ, որոնց պատճառը խմելու և ոռոգման ջրի անբավարար մատակարարումն է, որն ավելի է մտահոգում հատկապես ամռան ամիսներին:

Արզականում դեռևս լուծված չէ խմելու ջրի խնդիրը, որը կենսական անհրաժեշտություն է: Գյուղում առկա են ջրամատակարարման ինքնահոս աղբյուրներ, սակայն ներքին ցանցի վատթար վիճակի պատճառով, պատշաճ մակարդակով չի իրականացվում ջրամատակարարումը: Ջրամատակարարման ցանցն ամբողջությամբ, իր խողովակաշարերով և ենթակառուցվածքներով, գտնվում է գյուղապետարանի հաշվեկշռում, որը գյուղապետ Նորիկ Մովսիսյանի կարծիքով՝ համայնքի սուղ միջոցների հաշվին, հնարավոր չէ սպասարկել: «Կարծում եմ, որ այն համայնքներում, որտեղ խմելու ջրամատակարարումը տրված է համայնքին, իրականացվում է ոչ լիարժեք: Ջրամատակարարումը պետք է իրականացնի գլխավոր օպերատորը: Արզական համայնքն ընդգրկվել է այդ ծրագրում և որոշակի ներդրումներ կատարելուց հետո, (որոնց միջոցով կիրականացնեն ջրաչափերի տեղադրման, ներքին ցանցի հիմնանորոգման աշխատանքներ), «Հայջրմուղկոյուղին» պատրաստ է ընդունելու մեր ջրամատակարարման ցանցն իր հաշվեկշռում: Այլապես անթույլատրելի է տարերայնորեն կազմակերպել բնակչության ջրամատակարարումը, որի հետևանքով խաթարվում է սանիտարահիգիենիկ պայմանների ապահովումը, ստեղծվում է անմխիթար վիճակ: Չնայած ֆինանսական լուրջ ներդրումներ են պահանջվում, սակայն, հուսով եմ, որ առաջիկա տարիներին այդ խնդիրը լուծում կգտնի»,- հավելում է գյուղապետը:

Արզականում մեծ է ջրամատակարարման սպասարկման ոլորտը, շուրջ 3 հազար բնակչից բացի, խմելու ջրով պետք է ապահովել նաև գյուղի տարածքում և մերձակայքում գտնվող հանգստյան տներին, պանսիոնատներին, առողջարանային, հասարակական սննդի և այլ կառույցներին: Բացի այդ, ամռան ամիսներին զգալիորեն ավելանում է հովեկների թիվը: «Լիարժեք ջրամատակարարում իրականացնելու դեպքում արագ կկազմակերպվեի նաև ջրի վարձերի հավաքման գործընթացը: Իսկ քանի դեռ նորոգված չէ ջրամատակարարման ներքին ցանցը, և չենք կարող ապահովել որակյալ ջրամատակարարում, ջրի վարձավճարների գանձումը ևս չի կարող իրականանալ բավարար մակարդակով»,- փաստում է գյուղապետը:

Արզականում հիմնախնդիր է նաև ոռոգման ջրամատակարարումը: Սեփականաշնորհված 900 հա հողատարածքները (որից՝ շուրջ 600 հա-ը՝ վարելահողեր են) և տնամերձերը գրեթե զրկված են ոռոգման ջրից: Ներկայումս ոռոգվում են ընդամենը 300 հա հողատարածքներ, այն էլ՝ ոչ լիարժեք: Գյուղապետի տեղեկացմամբ՝ առանձին հատվածներ ենթարկվել են մասնակի նորոգման, սակայն խնդիրը դեռևս լուծված չէ, քանի որ ցանցն ամբողջությամբ ենթակա է հիմնանորոգման: «Ոչ լիարժեք ջրամատակարարումը բնակչության արդարացի դժգոհության տեղիք է տալիս»,- հավելում է Նորիկ Մովսիսյանը: Նրա տեղեկացմամբ՝ գյուղի մտահոգող խնդիրներից մեկն էլ մշակույթի տան (ճարտարապետական եզակի կառույց է) հիմնանորոգումն է, քանի որ գյուղի երիտասարդությունը չունի ժամանցային վայրեր: Այդպիսով՝ չի լուծվում նաև նրանց զբաղվածության խնդիրը: Բյուջեի հաշվին կատարվել են գյուղ տանող ճանապարհների ասֆալտապատման, գետերի հուների պաշտպանիչ պատվարների կառուցման աշխատանքներ, մինչդեռ դրանց կողքին դեռևս շատ անելիքներ կան: Գյուղամիջյան ճանապարհները ևս ենթակա են ասֆալտապատման, իսկ որոշ հատվածներում առկա է նաև լուսավորության ապահովման խնդիրը:

Ինչ վերաբերում է ոռոգման ջրամատակարարման կարգավորմանը, ապա Նորիկ Մովսիսյանի կարծիքով՝ խնդրի լուծման դեպքում, գյուղում կհիմնվեն այգիներ: Արզականում միշտ էլ զարգացած է եղել պտղաբուծությունը: Այստեղ արտադրված տանձը, խնձորը և այլ մրգատեսակներն ու հատապտուղները հասցվել են հանրապետության գրեթե բոլոր մարզերի շուկաներ, քանի որ մեծ էր պահանջարկը: Նպատակահարմար է նաև ոռոգման կաթիլային համակարգի ներդրումը, որը գյուղապետի կարծիքով, հնարավոր չէ իրականացնել՝ առանց ֆինանսական լուրջ աջակցության:

«Նոր տեխնոլոգիաները պետք է հասանելի լինեն գյուղացուն: Իսկ դրա համար պետք է իրականացվեն աջակցության ծրագրեր: Դժվարությունները շատ են, սակայն խնդիրները լուծելի են»,- իր խոսքը եզրափակում է գյուղապետը:

Դեռևս մ.թ.ա 55-34 թթ. Արտավազդ 2-րդ արքան, այս տեղանքի բնությամբ հիացած, կառուցել է իր ամառանոցը: Հարկավոր է անել հնարավորը, որպեսզի վերականգնվի ամառանոցային Արզականի երբեմնի համբավը:

Էջի նյութերը՝ Նելլի Սահակյանի

ԳՈՐԾԱՐԱՐ ԿԱՆԱՅՔ

... ԵՐԲ ՄՏԱՀՂԱՑՈՒՄՆԵՐԸ ԿՅԱՆՔԻ ԵՆ ԿՈՉՎՈՒՄ

«Մեղրատուն» ընկերությունն իր արտադրատեսականիով, հայաստանյան սպառողին հայտնի է միջազգային և տեղական կազմակերպությունների ցուցահանդեսներից, որոնց ընթացքում այցելուներին միաժամանակ հնարավորություն է ընձեռվել համտեսել արտադրանքը՝ մեղր, մեղրամթերք և ամենակարևորը, որը նորույթ է մեր շուկայում՝ մեղրի մաճառ: Վերջինիս ստացման հեղինակը անհատ ձեռներեց Կարինե Սուլյանն է:

«Մեղրատունն» իր գործունեությունն իրականացնում է Լոռու մարզում: Ընտանեկան բիզնեսով զբաղվող ընկերությունն իր գործունեությամբ նորույթներ բերեց հայաստանյան շուկա, որով և գրավեց սպառողի ուշադրությունը: Հմուտ մեղվաբույծ Կարինե Սուլյանը, ավանդական մեղվամթերք ստանալուց բացի, որոշեց մատուցել սպառողի քիմքին հաճելի նոր տեսականի: «Հաշվի առնելով մեղրի սննդարար հատկությունները՝ սկզբնական շրջանում երեխաներիս համար պատրաստում էի մեղրահյութ: Այնուհետև այն ենթարկեցի խմորման, որի արդյունքում ավելի են մեծանում օգտակար հատկությունները: Տեխնոլոգիական մշակման արդյունքում՝ ստացա մեղրի մաճառ: Սկզբում պատրաստեցի մանկական մաճառ, որը չէր պարունակում ալկոհոլ: Սակայն հետո մտահղացում առաջացավ կազմակերպել մեղրի մաճառի արտադրություն նաև մեծահասակների համար: Պատկերացրեք, ստացվեց, և արդյունքը գոհացուցիչ է: Պատրաստած ըմպելիքը պարունակում է 7 % ալկոհոլ»,- հիշում է Կարինեն: Ի դեպ, ստացվել է աղանդերային խմիչք, որը հաճույքով օգտագործում են հատկապես կանայք: Տիկին Սուլյանի տեղեկացմամբ, այժմ աշխատանքներ են տարվում մեղրի գինու ստացման ուղղությամբ, որը գործարարի կարծիքով, կիրառելի կլինի շատերի կողմից: Այդ նպատակով նույնպես մշակվում են նոր տեխնոլոգիաներ, արդեն ձեռք են բերել համապատասխան սարքավորումներ: Մեղրի մաճառն իր սպառումն ունի վանաձորյան շուկայում, ինչպես նաև Երևանում կազմակերպվող ցուցահանդեսներում: Կարինեի տեղեկացմամբ, այն բնապահպանորեն մաքուր ըմպելիք է, քանի որ հավելանյութեր չի պարունակում: Շուտով արտադրանքը կստանա «Էկոսննդի» հավաստագիր, ինչը հնարավորություն կտա ընդլայնել սպառման աշխարհագրությունը:

Կարինե Սուլյանը «Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի» (ՀԵԿԱ) Կին ձեռներեցների ցանցի անդամ է: Մասնակցել է գործարարության վերաբերյալ կազմակերպված սեմինարներին, ձեռք է բերել մասնագիտական փորձ և հմտություն: Ասոցիացիան աջակցել է նաև տեխնոլոգիական սարքավորումների ձեռք բերման և ցուցահանդեսներին մասնակցելու գործընթացին: Ընթացքում է նաև պատրաստի արտադրանքի շշալցման և ապրանքային տեսքի բարելավման աշխատանքների կազմակերպումը: Ընտանեկան բիզնեսը, Կարինեի կարծիքով՝ կայացել է, թերևս կան ծրագրեր, որոնք դեռևս մտահղացման փուլում են: Գործարար կինն այժմ մտորում է արտադրատեսականու ընդլայնման ուղղությամբ: Հումքը ստանում են սեփական տնտեսությունից, բուծում են 160 մեղվաընտանիքներ:

ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

ԱԿՈՒՆՔՑԻՆԵՐԸ ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆԸ

5

Ներկայացված ծրագիրը տնտեսական արդյունավետություն է խոստանում, որի առաջին քայլերն արդեն արվում են: Գյուղաբնակներն ուզում են բարելավել իրենց տնտեսական վիճակը, ապրել բարեկեցիկ կյանքով: Կոոպերատիվի անդամների սպասելիքներն այս առումով մեծ են: Եվ, որ ամենակարևորն է՝ ակունքցիները հավատում են կոոպերատիվի հաջողությանը»,- հավելում է Աբրահամ Ավետիսյանը:

Կոոպերատիվի նախագահը նույնպես վարում է ֆերմերային տնտեսություն: Կենդանիների գլխաքանակը վերջին մի քանի տարում 5-6-ից հասել է 20-ի և շարունակում է ընդլայնել տնտեսությունը: Ինչ վերաբերում է արտադրված գյուղմթերքին, ապա այն իրացնում են թե՛ Կոտայքի մարզում և թե՛ Երևանի շուկաներում: Աբրահամ Ավետիսյանի կարծիքով, կոոպերատիվը նման է ընտանիքի, որն առաջնորդվում է «Մեկը բոլորի համար, բոլորը՝ մեկի» կարգախոսով:

Արոտային շրջանը Ակունքում սկսվում է մայիսի 1-ից. այն տևում է մինչև առաջին ձյունը: Կենդանիների համար ամառային արոտավայրերում նաև ծածկերի կառուցման անհրաժեշտություն կա: Ինչ վերաբերում է գյուղատնտեսական տեխնիկային, ապա այն պետք է օգտագործվի նպատակային, որպեսզի արդյունք լինի: Նախատեսել են ստացված եկամուտները տրամադրել տեխնիկայի հավաքակայանի կառուցմանը, ինչպես նաև՝ գյուղտեխնիկայի համալրմանը: Ծրագրել են ձեռք բերել կարտոֆիլ հավաքող և սրսկիչ մեքենաներ:

Կոոպերատիվի անդամներով որոշել են լուծել նաև համայնքային խնդիրներ: Առաջիկայում «Ակունք համայնքի արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվը» կհամալրվի նոր անդամներով:

ԾՐԱԳԻՐԸ՝ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

ՀՀ գյուղատնտեսության նախարարության «ԳՇԻԳ» ՊՀ-ի կողմից իրականացվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագիրը 2015 թ.-ից մուտք գործեց նաև ՀՀ Կոտայքի մարզ: «CARMAC-2» ծրագրում ընդգրկվեցին Սոլակ, Լեռնանիստ (Հրազդանի տարածաշրջան), ինչպես նաև Գեղաշեն և Ակունք (Աբովյանի տարածաշրջան) համայնքները, որոնց բնակչության հիմնական զբաղվածությունն անասնապահությունն է: Կոտայքի մարզային աջակցության թիմի համակարգող Արտյոմ Վարդանյանի տեղեկացմամբ, ընթացիկ տարում ավելացել է ծրագրում ընդգրկված համայնքների քանակը:

Նշված 4 համայնքներում արդեն ձևավորվել են «Արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվներ», հստակեցվել են ծրագրերը, ինչպես նաև կատարվել են որոշակի աշխատանքներ: Արտյոմ Վարդանյանի տեղեկացմամբ, Գեղաշեն և Լեռնանիստ համայնքներին տրամադրվել են մեկական «ՄՏՅ-82 Բելառուս» մակնիշի տրակտոր և համապատասխան գյուղ գործիքներ: Մյուս համայնքներում նույնպես համաֆինանսավորումն ապահովելուց հետո, կտրամադրվի համապատասխան տեխնիկա՝ կերի կուտակման և ցանքի աշխատանքները կատարելու համար: Ցանում են հիմնականում հացահատիկային և կերային մշակաբույսեր, որոնք բարձր արդյունք են ապահովում: «Ծրագրում ընդգրկվել են այն համայնքները, որոնք ունեն զարգացած անասնապահություն: Ֆերմերը, պահելով որոշակի քանակությամբ գյուղատնտեսական կենդանիներ, նախ՝ իր ընտանիքի համար ստեղծում է աշխատատեղ: Այդպիսով՝ խոշոր տնտեսությունները զբաղվում են անասնապահական գործարարությամբ: Ծրագրում ընդգրկված համայնքների արոտավայրերի ջրարբիացման համար 2015 թ.-ին կատարվել են նախագծային աշխատանքներ: Այս տարի արդեն նախատեսվում է իրականացնել շինարարական աշխատանքները»,- ասում է պրն Վարդանյանը: Նշված 4 գյուղերում գյուղատնտեսական կենդանիների թիվը գերազանցում է 10 հազարը:

Անասնագլխաքանակի աճման միտումն արդեն նկատելի է: Արտյոմ Վարդանյանի կարծիքով՝ դրանց թիվը կավելանա հատկապես արոտավայրերում՝ խմոցների տեղադրումից հետո: «Գյուղացու առաջնահերթ խնդիրն այն է, որպեսզի արոտներում կենդանիների համար խմելու ջուր լինի, այլապես ստիպված են ջուր հայթայթելու համար քայլել 7-8 կմ, հետո դարձյալ հոգնած վերադառնալ արոտավայր, իսկ ծրագրի առանցքային խնդիրն անասնապությունը եկամտաբեր դարձնելն է»,- նշում է պրն Վարդանյանը:

Այս տարի, «CARMAC-2» ծրագրի շրջանակում, ավելացել է համայնքների քանակը: Հինգ համայնքներում՝ Բուժական, Քարաշամբ, Կապուտան, Արզական և Բջնի, արդեն կայացել են հիմնադիր ժողովներ, ձևավորվել կոոպերատիվներ: Եղանակային բարենպաստ պայմանների դեպքում վերը թվարկված համայնքներում կսկսվեն նախագծային աշխատանքները: Նշված գյուղերում առկա են բոլոր նախադրյալները՝ անասնապահության զարգացման համար: Այդ գյուղերի հեռագնա արոտավայրերում նույնպես կտեղադրվեն խմոցներ, որոշ տեղերում կենդանիների համար կկառուցվեն փարախներ, կբարելավվեն արոտավայրեր տանող ճանապարհները, կտրամադրվի գյուղատնտեսական տեխնիկա: «Որոշ համայնքներ ևս կամենում են ընդգրկվել ծրագրում: Այն մեր հանրապետությունում իրականացվող եզակի ծրագրերից է, որն ունի շոշափելի արդյունքներ: Ծրագրի առավելություններից մեկն էլ տեխնիկայով կատարվող ծառայությունների մատչելիությունն է»,- հավելում է մարզային աջակցության թիմի համակարգողը: Նրա կարծիքով, ծրագիրը լուծում է նաև բնապահպանական խնդիրներ, քանի որ, որպես կանոն, չօգտագործվող արոտավայրերը դեգրադացվում են և դառնում ոչ պիտանի՝ հետագա օգտագործման համար: Կարևորվում է նաև կենդանիների հերթափոխային արածեցումը: Այդ նպատակով կազմվում է արոտավայրերի կառավարման պլան:

«Փորձում ենք այնպես անել, որպեսզի գյուղացին շահագրգռված լինի զարգացնել անասնաբուծությունը: Ծրագրով նախատեսվում է նաև սանիտարահիգիենիկ պայմաններով ապահովված շինության կառուցման դեպքում, կոոպերատիվներին տրամադրել կաթի սառեցման, պանրի արտադրության և այլ սարքավորումներ: Կոոպերացիան գյուղացու համար շահույթ ստանալու, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպված և արդյունավետ իրականացման, գյուղմթերքի արտադրմանը և սպառմանն աջակցող միջոց է: Այդպիսով՝ կոոպերացիան մեկ գաղափարի շուրջ համախմբված ների միություն է»,- իր խոսքը եզրափակում է Արտյոմ Վարդանյանը:

Կոոպերատիվներն աշխատատեղեր են ստեղծում նաև մեխանիզատորների, արոտավայրերի պահպանման համար՝ վերահսկողների և այլ մասնագետների համար, միաժամանակ լուծելով սոցիալական խնդիր:

Էջի նյութերը՝ Նելլի Սահակյանի

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՈՐՈՃՈՂՆԵՐԻ ՈՐՈՇ ՃԻՃՎԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Որոճողների ճիճվային (հելմինթոզներ) հիվանդություններն այսօր մեծ տարածում ունեն մեր հանրապետությունում և յուրաքանչյուր տարի զգալի վնաս են պատճառում անասնապահությանը: Հետևաբար, որոճողների ճիճվային հիվանդությունները կանխարգելելու նպատակով, ֆերմերներին խորհուրդ է տրվում կատարելու հետևյալ միջոցառումները.

• Ճիճվային հիվանդություններից՝ տրեմատոդոզների, (ֆասցելյոզներ, դիկրոցելյոզ, պարամֆիստոմատոզներ) նկատմամբ անհրաժեշտ է կատարել՝

• Գարնանը, արոտավայր տանելուց մեկ ամիս առաջ, ամբողջ գլխաքանակը ճիճվաթափում են ներկայումս անասնաբուժական դեղատներում առկա՝ Ալբեն, Բենվետ, Բրովադազոլ, Հելմիցիդ և այլ դեղամիջոցներով: Ցանկալի է ճիճվաթափության ենթարկել տվյալ տարածքում գտնվող բոլոր կենդանիներին: Գոմաղբն անհրաժեշտ է հավաքել և ենթարկել կենսաջերմային մշակման:

• Արոտային սեզոնում, արոտավայրերը փոխում են 2-2,5 ամիսը մեկ անգամ, իսկ եթե հնարավոր չէ, ապա ողջ արոտային շրջանում՝ գոնե մեկ անգամ:

• Արգելվում է կենդանիներին հանել արոտի՝ գետափնյա, լճափնյա և ճահճոտ վայրերում կամ կերակրել այդ վայրերից հավաքված խոտով:

• Արգելվում է կենդանիներին ջրել անհոսք ջրամբարների ջրով:

• Անհրաժեշտ է արոտավայրերում կտրել թփուտները, հավաքել քարերը:

Որոճողների առավել տարածված ցեստոդոզների (մոնիեզիոզներ, թիզանեզիոզ, ավիտելինոզ և այլն) նկատմամբ պայքարելու նպատակով խորհուրդ է տրվում կատարել հետևյալ կանխարգելիչ միջոցառումները

• Արգելվում է վաղ գարնանը ոչխարներին կերակրել անասնաշենքերին կից տարածքներում աճող թարմ խոտով: Դրանք անհրաժեշտ է տարեկան 1-2 անգամ վարել և ցանել մշակովի խոտաբույսեր:

• Վաղ գարնանը, ընթացիկ տարում ծնված հորթերին, առաջին անգամ ճիճվաթափում են արոտավայր տեղափոխելուց 35-40 և երկրորդ անգամ՝ առաջին ճիճվաթափությունից 35-40 օր անց: Մեկ տարեկանից բարձր տարիք ունեցող հորթերին ճիճվաթափում են մեկ անգամ՝ արոտավայր տեղափոխելուց 35-40 օր անց:

• Գառներին ճիճվաթափում են արոտ տեղափոխելուց 14-16 օր անց, երկրորդ անգամ՝ առաջինից 15-20 օր անց և երրորդ անգամ՝ երկրորդից 25-30 օր անց: Մեծահասակ ոչխարներին ճիճվաթափում են հունիսի վերջերին կամ հուլիսի սկզբներին:

• Ցանկալի է մեկ անգամ ևս ճիճվաթափել սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին:

• Ճիճվաթափության նպատակով օգտագործում են տրեմատոդոզների ժամանակ առաջարկվող ճիճվամուղ դեղամիջոցները (Ալբեն, Ալբենոլ, Բենդազ, Բենվետ, Բրովադազոլ, Հելմիցիդ և այլն):

Որոճողների աղիքային ստրոնգիլյատոզների (հեմոնխոզ, նեմատոդիրոզ, բունոստոմոզ, խաբերթիոզ և այլն) նկատմամբ կատարում են հետևյալ կանխարգելիչ միջոցառումները.

• Տավարին առաջին անգամ ճիճվաթափում են ապրիլ-մայիս ամիսներին, երկրորդ անգամ՝ հուլիսին և երրորդ անգամ՝ օգոստոսին:

• Նույն տարում ծնված գառներին առաջին անգամ ճիճվաթափում են հուլիսի վերջերին կամ օգոստոսի սկզբին, երկրորդ անգամ՝ մսուրային պահվածքին անցնելուց հետո:

• Մատղաշներին և մեծահասակ ոչխարներին առաջին անգամ ճիճվաթափում են գարնանը՝ արոտավայր տեղափոխելուց առաջ և երկրորդ անգամ՝ մսուրային պահվածքի անցնելու ժամանակ:

• Աղիքային ստոնգիլյատոզների նկատմամբ խորհուրդ է տրվում օգտագործել հետևյալ ճիճվամուղ դեղամիջոցները՝ Ալբեն, Ալբենոլ, Բենդազ, Բենվետ, Բրովադազոլ, Հելմիցիդ և հատկապես՝ կլոր ճիճուների համար նախատեսված՝ Լևա-200, Ռոլենոլ, Իվերմեկտին և այլ պատրաստուկներով:

• Բացի ճիճվաթափությունից, արոտային ողջ սեզոնի ընթացքում, արոտավայրերն անհրաժեշտ է փոխել 5-7 օրը մեկ անգամ, իսկ կենդանիների ջրումը կազմակերպել խմելու կամ հոսող գետերի ջրով:

Որոճողների շնչառական օրգանների ստրոնգիլյատոզների (դիկտիոկաուլյոզներ, մյուլլերիոզ, ցիստոկաուլյոզ և այլն) նկատմամբ խորհուրդ է տրվում կատարել հետևյալ կանխարգելիչ միջոցառումները՝

• Նույն տարում կամ աշնանը ծնված հորթերին առաջին անգամ ճիճվաթափում են գարնանը՝ արոտավայր տեղափոխելուց 45-50 օր անց, և այսպես՝ 15-20 օրը մեկ անգամ, կենդանիներին պարբերաբար ճիճվաթափում են, մինչև արոտային շրջանի ավարտը:

• Ոչխարներին առաջին անգամ ճիճվաթափում են արոտավայր տեղափոխելուց 20 օր առաջ, երկրորդ անգամ՝ ամռանը և երրորդ անգամ մսուրային պահվածքին անցնելուց: Արոտային պահվածքի ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար փոխել արոտավայրերը:

• Արոտավայրերում մատղաշներին անհրաժեշտ է պահել բարձր տարիք ունեցող կենդանիներից առանձին:

• Կենդանիներին անհրաժեշտ է ջրել խմելու կամ ապահով վայրերից բերված ջրով:

• Շնչառական օրգանների ստրոնգիլյատոզներով հիվանդ կենդանիներին խորհուրդ է տրվում ճիճվաթափել (Ալբեն, Ալբենոլ, Բենդազ, Բենվետ, Բրովադազոլ, Հելմիցիդ և հատկապես՝ կլոր ճիճուների համար նախատեսված՝ Լևա-200, Ռոլենոլ, Իվերմեկտին և այլ պատրաստուկներով):

Վերը նշված կարգով կանխարգելիչ միջոցառումների կատարումը կկանխի որոճողների ճիճվային հիվանդություններով վարակումը և դրանց հետագա տարածումը:

Հովհաննես Նաղաշյան
ՀԱԱՀ, անասնաբուժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԾՐԱԳԻՐ

ԳԻՆՈՒ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Օրերս Երևանի (Ի-Վի-Էն) գինու ակադեմիայի կրթական ծրագրի շրջանակում Հայաստանի ազգային ագրարային համալսարանը և Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնը (ICARE) հիմնադրեցին Գինու ուսումնական լաբորատորիա և համտեսի սրահ:

Լաբորատորիան իր ուսումնական բնույթով եզակի է ոչ միայն Հայաստանում, այլև՝ տարածաշրջանում: Այն հագեցած է ժամանակակից սարքավորումներով և կահավորված է համանման լաբորատորիային ներկայացվող միջազգային չափորոշիչներին և տեխնիկական պահանջներին համապատասխան: Ուսանողներն այստեղ կսովորեն կատարել գինու քիմիական հետազոտություններ՝ Գինու միջազգային կազմակերպության (OIV) չափորոշիչների համաձայն: Գինու ոլորտի այս կարևորագույն կառույցին Հայաստանը անդամակցեց 2015 թ.-ին: Համտեսի սրահը նաև տարածաշրջանում եզակիներից է իր մասնագիտական-կրթական նշանակությամբ. այն կօգտագործվի ոչ միայն ուսանողների համար, այլև համալսարանի հետ գործակցող գինեգործական ընկերությունների մասնագետների վերապատրաստման նպատակով:

Ողջույնի խոսքով հանդես եկավ ՀԱԱՀ ռեկտոր Ա. Թարվերդյանը, ԱՀԿՄԿ հիմնադրամի տնօրեն Վ. Ուռուտյանը, GIZ հայաստանյան գրասենյակի ղեկավար Աննե Դորիթ Թեմփան և GIZ-ի «Մասնավոր հատվածի զարգացում Հարավային Կովկասում» ծրագրի ղեկավար Մարիտա Ռիդելը: Նրանք հիմնականում շեշտել են այն հանգամանքը, որ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունն օգնություն ցուցաբերելու համար ընտրում է մրցունակ ոլորտները, ասել է թե՝ գինեգործությունը Հայաստանում լայն զարգացման հեռանկար ունի:

Գինու լաբորատորիան և համտեսի սրահը իրականություն դարձնելու գործում ֆինանսատեխնիկական աջակցություն են ցուցաբերել Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնը (ICARE), Գերմանական միջազգային համագործակցության ընկերությունը (GIZ) և ամերիկահայ բարերար ամուսիններ Ջուդի Սարյանն ու Վիկտոր Զառուգյանը: Լաբորատորիայի եզակիությունը դրա ուսումնական բնույթն է, թեպետ այն հավասարապես օգտակար կլինի նաև առհասարակ արտադրության, գիտության և գինու բիզնեսի ոլորտների զարգացման համար:

ՀԱԱՀ ռեկտոր Արշալույս Թարվերդյանը մասնավորապես նշել է, որ համալսարանն իրականացրել է միջազգային բազմաթիվ ծրագրեր, որոնք, սակայն մինչ օրս եղել են կրթական և խորհրդատվական բնույթի, իսկ այս մեկն արտադրական նշանակություն ունի.

«Ստեղծվել է մի կառույց՝ գինու փորձաքննության և համտեսի կազմակերպման այս հոյակապ լաբորատորիան, որը լայն հնարավորություն է ընձեռում ոլորտի հետագա զարգացման ու ընդարձակման համար: Շնորհավորում եմ բոլորիս այս գեղեցիկ միջոցառման կապակցությամբ և ցանկանում հետագա հաջողություններ, նաև խորին շնորհակալություն ծրագրին աջակցող կազմակերպություններին»:

Ի-Վի-Էն գինու ակադեմիայի գինու քիմիայի ուսումնական լաբորատորիայի և համտեսի սրահի ժապավենը կտրել են Ա. Թարվերդյանն ու Աննե Դորիթ Քեմփան: Այնուհետև հյուրերը շրջել են գինու լաբորատորիայում և համտեսի սրահում, այնուհետև՝ համալսարանի Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնում:

Ավելորդ չէ նշել, որ լաբորատորիան և կից համտեսի սրահը մարմնավորում են Գինու ակադեմիայի համակարգող Զարուհի Մուրադյանի իրականացրած երազանքը, որը նա դարձրել էր շատերի երազանքն ու ծրագիրը:

2014թ. հիմնադրված Գինու ակադեմիան Գինեգործություն և գինու բիզնես 18-ամսյա կրթական ծրագրի իր առաջին 14 շրջանավարտները կտա հունիսի 1-ին: Նրանք կստանան Գերմանիայի Գայզենհայմի համալսարանի ավարտական հավաստագրեր: Ի դեպ, բոլորն էլ արդեն ձեռք են բերել մասնագիտական աշխատանք դեռ ուսանողական նստարանից: Սա կրթության մասին վկայող ամենախոսուն փաստն է:

Սոս Ավետիսյան

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է....

ԾՈՐԵՆԻՆ (ԲԱՐԲԱՐԻՍ) ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Երկրի վրա գոյություն ունի ծորենու մոտ 500 տեսակ: Հայկական լեռնաշխարհում աճում է ծորենու 3 տեսակը: Բուժական տեսանկյունից ուսումնասիրված է ծորենու սովորական տեսակը: Այն շատ ցրտադիմացկուն, երաշտադիմացկուն թփատեսակ է:

Բուժական նպատակով օգտագործում են ծորենու տերևները, ծաղիկները, հատապտուղները, ճյուղերի կեղևը և արմատները: Ընդհանրապես, տերևները հավաքում են կոկոնակալման և ծաղկման շրջանում, իսկ արմատները՝ աշնանը: Սովորական ծորենու պտուղները հարուստ են C, K վիտամիններով, շաքարներով, օրգանական թթուներով (կիտրոնաթթու և խնձորաթթու), պեկտիններով: Բնի և ճյուղերի կեղևը պարունակում է ալկալոիդներ, դաբաղանյութեր և այլն:

Ծորենու թուրմը և չոր հատապտուղները լայնորեն օգտագործվում են սննդաարդյունաբերության մեջ՝ սննդի թթվությունը բարձրացնելու նպատակով: Թարմ հատապտուղն օգտագործվում է հյութեր, մուրաբա, խմիչքներ պատրաստելու համար: Ծորենու բնափայտը շատ ամուր է և օգտագործվում է փայտե իրեր պատրաստելու համար:

Ժողովրդական բժշկության մեջ ծորենու պատրաստուկներն օգտագործվում են ներքին ու արտաքին արյունահոսությունների դեպքում: Ամերիկայում այն օգտագործվում է լյարդի, լեղապարկի հիվանդությունների բուժման, ինչպես նաև՝ աղեստամոքսային ուղիների լարվածությունը մեղմելու և ախորժակը բարձրացնելու համար:

Բժշկության մեջ օգտագործվում է նաև տերևների սպիրտային թուրմը: Ծորենու տերևներից, կեղևից և արմատներից անջատված «Բերբերին» պատրաստուկը նշանակվում է որպես լեղամուղ միջոց՝ լյարդի հիվանդությունների (լեղաքարեր, լեղապարկի բորբոքում, լյարդի բորբոքում) բուժման համար: Մեկ ճաշի գդալ արմատների կամ կեղևի փշուրները եփել 10 րոպե 500 մլ ջրում. այս եփուկը օրը 3 անգամ խմելուց հետո կթեթևացնի ստամոքսի ցավերը: Այս եփուկը նաև տոնուսը բարձրացնող նշանակություն ունի: Այն նաև շատ լավ օգնում է ռևմատիզմի ու այտուցների դեպքում: Եփուկը կարգավորում է սրտի աշխատանքը և նպաստում զարկերակային ճնշման իջեցմանը: Այն թրջոցի և ողողման ձևով օգտագործում են նաև կոպերի և լնդերի բորբոքման ժամանակ:

Ծորենու տերևների թուրմը կարելի է օգտագործել սրտանոթային հիվանդությունների բուժման նպատակով: Այն արագացնում է սրտի ռիթմը, մեծացնում նրա կծկման տատանման սահմանը, իջեցնում զարկերակային ճնշումը, կարգավորում արյան մակարդելիությունը, ինչպես նաև առաջացնում է արգանդի կծկում և կանխում արյունահոսությունը, նպաստում է լեղու արտադրությանը: Պտուղն օգտակար է դեղնախտի, թոքաբորբի, իշիազի, անգինայի, երիկամների հիվանդությունների բուժման համար: Քանի որ ծորենու արմատները պարունակում են մեծ քանակությամբ ալկալոիդներ, պետք է զգույշ լինել և չչարաշահել դրա օգտագործումը:

Դիմադրողականությունը բարձրացնելու համար օգտագործել՝ կիտրոնի, ընկույզի ու մի քանի տեսակ չորամրգի խառնուրդ: Դրա համար պետք է 3-4 կիտրոն, 1-2 բաժակ ընկույզ, 300 գ ծիրանաչիր, 300 գ չամիչ և 3-4 ճաշի գդալ մեղր: Այս ամենն անցկացնել աղացով, իսկ վերջում խառնել մեղրը: Այս խառնուրդը կարելի է ընդունել անսահմանափակ, իհարկե՝ զգուշանալով ալերգիայից:

ԽԱՇԽԱՇԻ ԿԱՄ ԿԱԿԱՉԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Խաշխաշ կամ կակաչը (լատ՝ Papaver) կակաչազգիների ընտանիքի միամյա, երկամյա կամ բազմամյա բույսերի ցեղին է պատկանում: Հայտնի է մոտ 100 տեսակ: Տարածված է առավելապես Հյուսիսային կիսագնդում: Միամյա, 80-150 սմ բարձրության բույս է, արմատն առանցքային է, ցողունը՝ կանգուն, տերևները նստադիր են, մազմզոտ, խոշոր, պտուղը տուփիկ է:

ՀՀ-ում հայտնի է կակաչի 14 տեսակ՝ պարսկական, ավազասեր, ուրբանի, ծաղկակիրավոր, սակավատերև և այլն. տարածված է գրեթե բոլոր մարզերում: Աճում է ենթալպյան մարգագետիններում, լեռնային գոտիներում, չոր կանաչապատ լանջերին, թփուտներում, ցանքերում և այլուր: Ցողունը մազմզոտ է կամ մերկ, ճյուղավորվող: Կտրելիս առաջանում է սպիտակ, դեղնավուն կամ նարնջագույն կաթնահյութ: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին: Պտուղը երկարավուն բազմասերմ տուփիկ է: Սերմերը մանր են, ցանցանման, տարբեր գույների: Սակավատերև տեսակները գրանցված են ՀՀ «Կարմիր գրքում»:

Ձիթատու խաշխաշի սերմերը պարունակում են 46-56 % յուղ և մինչև 20 % սպիտակուցներ: Վերամշակումից հետո ձեթն օգտագործվում է հրուշակեղենի և պահածոների արտադրությունում, օծանելիքի արդյունաբերության մեջ: Դեղատու սորտերի տուփիկներից սերմերը հեռացնելուց և աղալուց հետո ստանում են ալկալոիդներ (մորֆին, կոդեին, պապավերին), որոնք բժշկության մեջ օգտագործվում են որպես ցավազրկող միջոց: Այսօր դեղատու սորտերի ցանքերն ամենուրեք արգելված են, քանի որ ափիոնը նաև թմրանյութ է :

Որպես անհետացող տեսակ՝ գրանցված է հայկական «Կարմիր գրքում»: Մեր հանրապետությունում հանդիպում է Շիրակի դաշտում, Արագածի լանջերի, Լոռիում, Ապարանում, Սևանի ավազանում, Արարատյան դաշտի նախալեռնային գոտում, Վայքում, Զանգեզուրում, չոր, քարքարոտ լանջերում: Հայաստանից դուրս հանդիպում է հյուսիսային

Իրանում, Փոքր Ասիայում: Լուսասեր է, բավականին չորադիմացկուն, պահանջկոտ չէ հողի նկատմամբ: Ցրտադիմացկուն է: Մեր օրերում ակտիվ սելեկցիոն աշխատանքներ են կատարվում՝ բույսի նոր տեսակներ ստանալու ուղղությամբ: Այժմ հայտնի են այդ տեսակի բազմաթիվ տարատեսակներ, բազմազան գունավորմամբ:

Ապացուցված է, որ ծաղիկները շատ բան կարող են ասել մարդու մասին, և պատահական չէ, որ մեզանից յուրաքանչյուրը նախընտրում է այս կամ այն ծաղիկը, իսկ մեկ ուրիշը՝ անտեսում կամ չի սիրում: Այստեղ հարցը բույրը չէ, ոչ էլ երանգը կամ ձևը, այլ՝ հոգեհարազատ լինելը: Հիմնվելով այն հանգամանքի վրա, թե ինչ ծաղիկ է նախընտրում մարդը՝ կարելի է դատել նրա բնավորության մասին: Եվ այսպես.

Կակաչը՝ բարակ ոտիկի վրա կանգնած ակնահաճո այս բաժակը զարմանալիորեն ճկուն և պլաստիկ խառնվածքի տեր ծաղիկ է: Խորհրդանշում է այդպիսի խառնվածք ունեցող մարդու: Նա չի ճկվում կյանքի դժվարությունների ազդեցության ներքո և ուժեղ էներգետիկ պոտենցիալ ունի: «Կակաչը» թեթև է շփումներում, սակայն ոչ ոք չգիտի նրա իրական ծրագրերի ու մտահղացումների մասին. իր պարզությամբ հանդերձ՝ նա մարդ-հանելուկ է: Ակնհայտ է մի բան՝ հոգու խորքում նա միշտ ավելի բարվոք կյանքի հույս է փայփայում: Այդ անմար հավատն է նրան ուժ հաղորդում, որպեսզի կանգուն մնա կյանքի մատուցած դառնությունների դեմ ու նաև ժամանակ առ ժամանակ բավարարվի քչով:

Լիլիթ Գասպարյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարգելի քաղաքացիներ,

Տեղեկացնում ենք, որ Գյուղատնտեսական հանրագիտարան ձեռք բերելու համար կարող եք զանգահարել 011 23 14 30 հեռախոսահամարով:

Հանրագիտարաններն առկա են նաև Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններում, ինչպես նաև՝ «Նոյան Տապան» և «Բուկինիստ» գրատներում:

«ԳԱՀԿ» ՓԲԸ-Ի 2015թ. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ընկերության 2015թ. հասույթը կազմել է 58253.0 հազար դրամ,
որից՝ 1.ՀՀ պետ բյուջե-47862.0 հազար դրամ
2. Թերթերի և ամսագրերի իրացում -3818.0 հազար դրամ
3. Այլ ծառայություններ-6573.0 հազար դրամ

Ընկերության ծախսերը կազմել են՝ 58969.0 հազար դրամ,
որից՝ 1.Աշխատավարձ-43449.0 հազ դրամ
2.Տպագրական ծախսեր-2865.0 հազ.դրամ
3.Վառելիք-4089.0 հազ.դրամ
4.Կապի ծառայություն-1195.0 հազ.դրամ
5.Շրջանառության հարկ-2880.0 հազ.դրամ
6.Գործուղման ծախսեր-717.0 հազ.դրամ
7.Այլ ծախսեր-3774.0 հազ.դրամ

Ընկերության շահույթը (վնասը) 2015թ. է կազմել (716) հազ. դրամ:

«Ագրոլրատու» թերթի 2015թ. տարեկան հաշվետվություն
Թերթի հասույթը 2015թ. կազմել է 12015.0 հազար դրամ, որից՝
1. ՀՀ բյուջե-7623.0 հազար դրամ
2. Թերթի իրացումից-2772.0 հազար դրամ
3. Նյութի տպագրում 1620.0 հազ.դրամ:

Ագրոլրատու թերթի ծախսերը կազմել են 10849.0 հազ.դրամ, որից
1. Աշխատավարձ-8037.0 հազ.դրամ
2. Նյութածախս-770.0 հազ.դրամ
3. Առաքման վճար-628.0 հազ.դրամ
4. Այլ ծախսեր-814.0 հազ. դրամ
5.Շրջանառության հարկ-600.0 հազ.դրամ

«Ագրոլրատու» թերթի շահույթը (վնասը) 2015թ. կազմել 1166.0 հազ. դրամ:

ԱԳՐՈ Լրատու
AGRONEWS
Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ
Տնօրեն Ա. ՎԱՀԱՆՅԱՆ
Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ Լ. ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆ

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ 000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 35
ստորագրված է տպագրության 16.05.2016 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,
Երևան, Մամիկոնյանց 39ա